

ԳՈՒՍՏԱԻ ԱԴՈԼՖ ՇՈՌԻՄՖ

(† 4/16 դեկտ. 1892 թ.)

Մեր ընթերցողներին անցեալ ամիս հաղորդեցինք հալերէնագէտ Գ. Ա. Շոռամֆի մահւան լուրը։ Այժմ կարող ենք հաղորդել հետեւեալ կենսագրական տեղեկութիւնները նորա մասին։

Գոստաս Ադոլֆ Շոռամֆը ծնւել է 8 սեպտեմբեր 1844 թւականին Սարասբուրգի մօտ Օքերհաուսերգեն'ում։ Նա միակ որդի էր բողոքական մի ընտանիքի։ Գոստաս Ադոլֆը իննը տարեկան էր, երբ որ վախճանւեց սրտ պատուր հակը և 17, տարեկան երբ կորցրեց նաև իւր մօրը։ Իւր սկզբնական ուսումը Գ. Շոռամֆը ավարտեց Սարասբուրգի բողոքական գիմնազիան և արդէն 15 տարեկան հասակում ստացաւ bachelier és lettres'ի ¹⁾ վկայականը։ Անուհետև նա իրան նւիրեց ատտածարանական բաժնին և երկու տարուց լեռու ուսուցչութեան, 3 տարի ալդ ասպարիդում իսպանիայի Վալենցիա քաղաքում մնալուց լեռու—նա սեղափոխւեց Անգլիայ, ուր և մնաց 1866 թւականից սկսած, 1870 թ. դըժբաղդ պատերազմից լեռու, երբ իւր հալերէնիքը գերմանական ճահանդ լաւ տարարեց, Գ. Ա. Շոռամֆը դուքս Ֆրանսահայաստակ, Շոռամֆը պոսակած չէր։ Նրա մօտ, ազգականներից մէկը, հանդուցեալի քուին, Գ. Շներելէ, նշանաւոր դառաւ իբր Ֆրանսիացի հալերենասէր, շնորհիւ 1887 թ. պատահած անցքին—գերմանական սահմանագլխի վրա։

Հալերիս համար Շոռամֆը ծառայութիւններ մատուցեց թէ իբր աշխատակից Լոնդոնում ֆրանսերէն լեզուով հրատարակւող մի հալ թերթի (վերջինս լուս տեսաւ մի տարի նաև անգլիերէն լեզուով և դրա թարգմանութիւն անողն էր հանգուցեալը), նոր սկսեց աշխատակցել նաև «Մուրճ»-ին և նշանաւոր եղաւ գլխաւորապէս իւր մի գրածքով «Հալկաբանութիւնը Եւրոպայում, որը օկուեց թարգմանեւ նախ «Մուրճ»-ում և ապա վերետիկի «Բաղմալէպո»-ում։ Նրա ալդ գրածքը մի ամփոփումն է ալն ամենի, ինչ երբ և է լուս է տեսել հալ մատենագրութեան վերաբերեալ Եւրոպայում։ Իբրև մի լիակատար սխտեմատիկական աշխատասիրութիւն Շոռամֆի Les études

arménienens en Europe ներկայացնում է մի շատ օգտակար գործ թէ օտար
 ներքի համար և թէ մասնաւորապէս հայերիս համար:

Հանգուցեալը պատրաստում էր, «Մուրճ»-ին ուղարկելու համար, մի
 մանրամասն ղեկուցում Սոֆուս Բուզգէլի լեզուաղիտական նոր գիտերի
 մասին:

Հանգուցեալը առաջինը եղաւ որ Լոնդոնի արեւելագէտների ժողո-
 վում առաջարկեց կազմել մի միջազգային ընկերութիւն «հալ ուսումների
 առաջացմանը համար»։ Աւելի է ազդեց ընկերութիւնը ներկայումս գոյու-
 թիւն ունի, հայերս պարտական ենք դրանով հանգուցեալ հաւաստելին, որը,
 ի դէպ ասած, երբէք չէր ծածկում իւր համակրութիւնը դէպի մեզ, ազգ-
 քրիստոնեայ և ապագայ խոստացող ժողովուրդը Առաջաւոր Ասիայի մէջ:

Իւր նոր հայրենիքում Շոռմֆը դասախօսում էր Ֆրանսերէնը, գեր-
 մաներէնը և իտալաներէնը Լոնդոնի University College School դպրո-
 ցում: Նա անդամ էր Անգլիայի Ֆրանսիական պրոֆեսորների ազգային
 լ'էնկերութեան, Լեզուագէտների լ'էնկերութեան և Թագաւորական Ասիական
 լ'էնկերութեան: Սրեք տարի սրանից առաջ նւիրելով հայերէնի ուսումնա-
 սիրութեան—վերջերքում նա աչնքան էր ընտելացել դրաբաւին, աշխար-
 հաբաւին և գաւառական շատ բարբառներին, որ ինքը կարողանում էր
 լիովին կերպով օգտւել աղբ ըլլորից:

Գ. Շոռմֆը վախճանեց անցեալ դեկտ. 16 (ն. ու.) երեկոցեան. նոյն
 օրը նա մի դասախօսութիւն էր արել հայերի մասին Լոնդոնի Լեզու-
 գէտների ժողովում: Թաղումը անդի էր ունեցել նոյն ամսի 23, Թուհամի
 դերեզմանատանը: Ներկայ էին հանգուցեալի բարեկամները, համալսարանի
 պրոֆեսորները, ներկայացուցիչներ զանազան ընկերութիւններից և հատա-
 տութիւններից: Պրոֆեսոր Մինաս Չերազ մի սրտառուչ դամբանական
 կարդաց իւր աշխատակցի դերեզմանի վրա և վերջացրեց իւր խօսքը աչա-
 պէս. «Բարով մնաս, քաջարի բարեկամ և ազնիւ հաւաստէր: Նի՞մէ երբ և իցէ
 քո թանգազին Ֆրանսիան մոռանալ իւր ամենամանձնանէր որդիներից
 մինին,—երախտադէպ Հալաստանը ընդմիշտ կը պահպանի քո անունը իւր
 բարեկամների և պաշտպանողների անունների ոսկի դրքի մէջ»:

Հանգուցեալին, իբր եւանդոտ ազգասէրի, արդեււած էր մուտքը Գեր-
 մանիա: Սակայն ինքը հանգուցեալը չաճախ ասում է եղել իւր բարե-
 կամներին թէ առանց աղբ արգելքի էլ ինքը սիրտ չէր ունենալ տք
 դնել իւր հայրենիքի մէջ—մինչև որ սա կը մնալ օտարի ձեռքին: